

ՄԵԼԿ

Տարեկան դինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:

Սեւանի մասերը 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանատիպ մէջ:

Օտարաբարացիք դիմում են ուղղակի:

Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիկովով:

Յայտարարութիւնները համար գծարում են
խրատանցիւր թուին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջմիածնի ձեմարանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Սղնակից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ, Բերդերը և չէյն Իրէզուլան, Նա-
մակ Թիւրքիայից, Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԷՋՄԻԱԾՆԻ ՁԵՄԱՐԱՆԸ

Մի քանի շաբաթ սրանից առաջ թէ
թիֆլիսում և թէ գաւառներում բոլոր խո-
տակցութեան առարկան էջմիածնի ձեմա-
րան էր: Այդ ձեմարանի մէջ հրաւիրու-
ցան նոր վերատեսուէչ, ընկտոր, և նոր ու-
սուցիչներ: Բոլորն էլ ահագին ուժիկներով:
Այդպէս, օրինակ, տեսուչը ստանում է
5000 բուր, ուսուցիչները 4000 բուր,
3000 բուր, 2000 բուր տարեկան, չը հաշ-
ւած ձեմարանի ծախսը:

Մենք չենք խօսի այն քանի վրա թէ որ-
քան ազնիւ կամ անազնիւ է մեր ուսու-
ցիչների և տեսչի կողմից պահանջել այդ
տեսակ ահագին ուժիկներ կոպէկներով հա-
ւաքած ազգի փողերից: Մենք կը նայենք
միայն այդ երեւոյթի վրա երկու տեսակէ-
տից, նախ՝ արժանի են արդեօք հրաւիր-
վածները այդ տեսակ ահագին ուժիկների
և երկրորդ՝ ի՞նչ ազդեցութիւն կունենայ
ձեմարանի տեսչին և վարժապետներին այդ
տեսակ հրէշաւոր ուժիկների նշանակելը և
մեր միւս ազգային դպրոցների տեսուչների
և ուսուցիչների վրա:

Ամենքին յայտնի է որ ոչ մի համարա-
րանի պրօֆէսորներ հինգ հազար բուր
ոռնիկ չեն ստանում: Պէտք է ընդունել
ուրիմն, որ պ. պ. Նահապետեան, Մանդի-
նեան և այլն, ամենատեւեղի գիտնականներ
են, մի կոստամարովից, մի իշխանուհուց, մի
Ուլիսակուց, մի Սեչենովից, մի Մենդելե-
վից բարձր....

Ամենքը լսել են նոյնպէս որ մի ակադե-
միայի, մի համարաբանի ընկտոր կամ պը-
րօֆէսոր դառնալու համար, հարկաւոր է
գոնէ մի օր և է ուսումնական գրուածքով
յայտնված լինել: Մի ակադեմիայի ընկտոր
ընտրվում է առհասարակ ոչ թէ միայն գի-
տութեան մէջ յայտնի մի անձնաւորու-
թիւն, բայց և մի մարդ որ նշանուոր է
իր բազմակողմանի հմտութիւններով, որ-
պէս զի այդ ուսումնական կարողանայ ոչ
թէ միայն պոլիցիական, կարգապահական
պաշտօնը կատարել բարձրագոյն դպրոցում,
այլ ուղղութիւն տալ ձեմարանի ընդհա-
նուր ուսումնական գործին:

Այդ տեսակ պաշտօնների վրա գիտնա-
կանները հրաւիրվում են, առհասարակ
մրցողական գրուածքներ ներկայացնելով,
իրանց ծրագրով հանդերձ, որի մէջ յայտ-
նուած են իրանց հայեացքը դպրոցի ուսում-
նական ընթացքի վրա: Նոյնը և այս կամ
այն առարկայի պրօֆէսորների վերաբերու-
թեամբ:

Մենք կը հասկանայինք որ ընկտորի
կամ պրօֆէսորների պաշտօնների վրա հը-
րաւիրվէին այնպիսի յայտնի գիտնականներ,
ինչպէս՝ Էմին, Պատկանեան, Այտընեան,
Թրուանդեան, Հիսարեան, մինչև անգամ

Շահադիգեան, որոնք յայտնի են իրանց
գիտնական թէ բանաստեղծական գրուած-
քներով, իրանց մանկավարժական երկարամեայ
փորձով, իրանց գրականական աշխատու-
թիւններով: Նրանցից ոչ ոքին երբէք ոչ
ոք չէ հրաւիրել, բայց հրաւիրում են մի
Նահապետեանին, որ ոչինչով յայտնի չէ,
այն էլ ահագին, չը լաված ուժիկով:

Մենք կրկնում ենք, որ ոչ Պատկանեան,
ոչ էլ Էմին երբէք իրանց պրօֆէսորու-
թեան ժամանակ այդ տեսակ ուժիկներ
չեն ստացել: Բայց ասենք թէ մայրաքա-
ղաքի կենտրոնի գրկվելու և հեռու վա-
ղարչապատ գնալու համար, մտաւոր և
բարոյական մի քանի գրկանքների համար,
հարկաւոր է վարձատրվել գոնէ նիւթական
միջոցներով: Բայց հարցնող լինի՝ մի Նա-
հապետեան, մի Ներսիսեան դպրոցի ու-
սուցիչ, մի անային վարժապետ, մի հասա-
րակ համարաբանական մարդ, որի նման-
ները հարկւրներով կան այժմ մեր ամեն
մի քաղաքում, ի՞նչ գիտնական աշխատանք
էր արդիւնաբերում թիֆլիսում նստած,
որ գրկվելով թիֆլիսից, նա պէտք է
իրան վարձատրի ահագին ուժիկով,
որովհետեւ իր բացակայութեամբ գրկում է
գիտութիւնը, համարաբանը, բարձրագոյն
դպրոցը իր ուսումնական աշխատանքներից,
գրկում է գիտութիւնը իր հետազոտու-
թիւններից.... Մի գիտնականի համար
թողնել մայրաքաղաքը, նշանակում է վերջ
տալ իր ուսումնական աշխատութիւններին:
Նրան հարկաւոր են՝ կայսերական գրադա-
րանը, հարուստ թանգարաններ, ուսում-
նական շրջան մի որ և է զրկածք արդիւ-
նաբերելու համար: Այդ տեսակ մարդու
համար թողնել մայրաքաղաք և գնալ վա-
ղարչապատի պէս մի յետ ընկած տեղ, նը-
շանակում է գնալ անապատ, վերջ տալ իր
գիտնական հետազոտութիւններին: Կարգ է
որ նա կուզենայ վարձատրել իրան գոնէ
մեծ ուժիկով: Բայց եթէ Նահապետեանը
հինգ հազար է ստանում, ի՞նչ պէտք է
ստանային, օրինակ, Այտընեան, Էմին, կամ
Պատկանեան,—երեւի քսան հազար բուր
տարեկան:

Մենք ունենք այժմ բազմաթիւ, թէև ա-
սենք փոքրիկ աշխատողներ, ազգային կրթ-
ութեան ասպարիզում, որոնցից մի քա-
նիները գրողներ են, միւսները վարժապետ-
ներ կամ տեսուչներ, մի քանիները բարձ-
րագոյն ուսում են ստացել և ոչինչով պա-
կաս չեն Նահապետեանից, իսկ գուցէ բարձր
են նրանից, նրա պէս համարաբանական
գիպում ունեն, աւելի ոչինչ, միւսները, թէև
համալսարանական գիպում չունեն, բայց
կարճ ժամանակում յայտնվել են հասարա-
կութեան մէջ, որպէս գրողներ, մատենա-
գիրներ: Մենք ունենք Բարխուդարեանց,
մանկավարժ և Շիլլերի թարգմանող, ու-
նենք Պալասան, մանկավարժ և նոր քերա-
կանութիւն մշակող, ունենք Բաֆֆի, լաւ
հայագէտ և յայտնի գրող, ունենք բազ-
մաթիւ բարձր ուսում ստացած ուսուցիչ-
ներ և տեսուչներ Արքադով Գովհաննիսեան-
ցի նման, Ժողովրդական գրողներ Ազայեան-
ցի նման: Այդ բոլոր մտաւոր մշակները,

մենք հաւատացած ենք, շատ բնական կը
գտնեն, եթէ Էմին, Սրուանդեանց, Այ-
տընեան, կամ Պատկանեան հրաւիրված լի-
նէին ակադեմիայի ընկտորի պաշտօնի վրա
և ստանային հինգ հազար բուր ուժիկ:
Նրանք մեծ յարգանքով կը խոնարհվէին
այդ երեւոյթի առջև: Բայց այդ մեր բոլոր
յիշվածները ի՞նչ պէտք է մտածեն, տես-
նելով որ Նահապետեանի պէս մի մարդ, որ
նրանցից ոչինչով բարձր չէ, այլ ընդհակա-
ռակն, այն էլ չունի ինչ որ իրանք ունեն,
այսինքն գրականական անուն, հրաւիրվում է
ընկտոր ձեմարանի հինգ հազար բուր ու-
ժիկով: Պարզ է որ այդ տեսակ երեւոյթը
տեսնելով զանազան Բարխուդարեաններ, Պա-
լասաններ, Արքադով Գովհաննիսեաններ և
հազար ու մի գաւառական տեսուչներ ու
վարժապետներ, որոնցից շատերը բարձր ու-
սում ստացած են Նահապետեանի պէս, կը
մտածեն, եթէ նա հինգ հազար է ստա-
նում, մեզանից ոչինչով բարձր չը լինելով,
ինչի մենք էլ չը պահանջենք դպրոցների
հոգաբարձուներից մեր ուժիկների աւելաց-
նելը.... Եւ կատարեալ իրաւունք կունենան
Այդպիսով կատարեալ գէ՞մօր ա լի գա-
ցի ա կը մոտի մեր բոլոր դպրոցներում,
և ուսուցիչների ու տեսուչների վարձը շատ
կը թանգանայ:

Ամենքը հասկանում են որ եթէ մի Էմին
ահագին ուժիկով ընկտոր է հրաւիրվում,—
այդ նրա գիտութեան, նրա գիտնական
անուն համար է, բայց բոլորն էլ շատ
լաւ գիտեն որ Ներսիսեան դպրոցի երէկվայ
տեսուչ և անային վարժապետ Նահա-
պետեան, մի օրվայ մէջ գիտնական չի
դառնայ միայն գրանով, որ այսօր ընկտորի
անուն է կրում:

Հրաւիրել ձեմարանի մէջ ամենանշան
մարդկանց այդ տեսակ ահագին ուժիկնե-
րով, ամենալաւ միջոց է մահվան հարուած
տալ մեր բոլոր մնացած գաւառական դըպ-
րոցներին և մինչև անգամ նպաստել նրանց
փակմանը: Մի՞թէ դա է էջմիածնի ձեմա-
րանի նպատակը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽՅ

Հոկտեմբերի 5-ին

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է,
որ այստեղ հիմնվեցաւ և մի կուրս Ազնու-
կան կուրսը անուանով, ուրիմն այժմ ունենք
երկու կուրս՝ Քաղաքային և Ազնուական: Քաղա-
քային կուրսի անդամներն մեծ մասը հայեր են,
իսկ Ազնուականի՝ վրացիներ: Բայց այս երկու
կուրսերից ոչ մէկը չէ ծառայում իր բուն նը-
շանակութեանը: Եթէ դուք մտնէք այս կուր-
սերից մէկում կամ միւսում՝ զարմացած կը մը-
նաք, Գուք կը տեսնէք անդամներին կանաչ սե-
ղանի շուրջը նստած թուղթ խաղալիս, միւսնե-
րին ընկալալիս, իսկ երբորդներին դա-
տարկ խօսակցութիւններով պարապելիս, իսկ
ընթերցարանում կամ չէ տեսնի ոչ մէկին լը-
րագիր կարդալիս և կամ եթէ կը տեսնէք, այն
էլ երկու կամ երեք մարդ, Քաղաքային կու-
րսում ստացվում են հայերէն լրագիրներից «Մը-
շակ», «Մեղու», և «Փարոս Հայաստանի», բայց

սրանց կարգացողները շատ քիչ կան, երկու
կամ երեք մարդ են կարգում միայն՝ չը նա-
յելով որ սղնակիցները հայերէն բաւականա-
չափ են հասկանում, բայց արդեօք սիրում են
այդ լեզուն, աշխատում են դրան առաջ տանել,
կրթում են իրանց որդոցը այդ լեզուով, ուղար-
կում են նրանց հայոց ուսումնարան—ոչ, Հայոց
ուսումնարանում գտնվում են միայն աղքատ
գաւի որդիքը, որոնք չեն կարողանում քաղա-
քային ուսումնարանում տարեկան 8 բուրը նը-
շանակած ուսման վարձը վճարել: Մինչև այժմ
քաղաքային ուսումնարանում ուսման տարեկան
վարձը 5 բուր էր, բայց ուսումնարանի վար-
չութիւնը տեսնելով տեղացոց անտարբերութիւ-
նը դէպի հայոց ուսումնարան— ուսման վար-
ձը աւելացրեց, Միւս անգամ աւելի մանրա-
մասն կը խօսեմ հայոց և քաղաքային ուսումնա-
րանների վրա:

Մեր խօսքը կուրսի մասին էր: Այստեղ կու-
րսը կարծում են մի հիմնարկութիւն, որտեղ կա-
րելի է թուղթ խաղալով ժամանակ անցկացնել,
խորհուրդ կը տալիք երկու կուրսի անդամնե-
րին միմեկին դարձեալ, ունենան մի կուրս շատ
անդամներով, կազմեն մի ոյժ, որովհետեւ այս-
պիսի գաւառական քաղաքների համար բաւա-
կան է մի կուրս, թողնեն այն շուրջ ծախսերը,
որ անում են թղթխաղի մէջ և աննպատակ
վատնում են փողերը, զբաղվեն ազգօգուտ գոր-
ծերով, օգնեն ազգին, որը օգնութեան կարօտ
է, առաջ տանեն ուսումնարանները, օգնեն
քաղաքիս չքաւոր ընտանեացը, որոնք իրանց
չքաւորութեան պատճառով գրկում են իրանց
որդոցը ուսումից, եթէ կուրսումը, որտեղ ժողով-
վում են տեղացիները, չեն մտածի, չեն խօսի
այսպիսի օգտակար բաների վրա, ի հարկէ դուր-
սը աւելի չեն կարող, որովհետեւ ցրված են նը-
րանք: Թէպէտ ցերեկով հրապարակի վրա էլ
ժողովվում են և խօսում, բայց այդ խօսակցու-
թիւնը աւելի անձնական է քան թէ ընդհանուր:
Հրապարակ ասելով հասկանում ենք Շահվեր-
դեանցների քարվասարայի կուրսը, որտեղ ժո-
ղովվում են և զրօսում, բայց այդ զրօսելը ա-
ւելի մեծ է բերում, քան թէ օգուտ, որով-
հետեւ քարվասարայում պահում են ձիւսներ, ո-
րոնց աղբը ապակաւում է չլնապատող օդը:

Տեղացիները չունեն զրօսարան. սրանց զրօսա-
րանն է յիշեալ Շահվերդեանցների քարվասա-
րայի կուրսը. եթէ Շահվերդեանցները կապեն
այն կուրսը և արգելեն մանգալ այնտեղ, ինչ
պէտք է անեն այն ժամանակ տեղացիները, այն
ժամանակ կամ պէտք է տանը նստեն և կամ
թափառեն փողոցները: Վաղուց է խօսակցու-
թիւն կալ չլինելու մի բուլվար, զրօսարան, այ-
գի, բայց այդ լոկ խօսք էր: Հասարակական ըզ-
րօսարանի կարևորութիւնը ունի Սղնակը,
մանաւանդ կանանց և օրիորդների համար, ո-
րովհետեւ նրանք փակված կեանք են վարում:
Եթէ փակված կեանք չը վարեն, բաւ ուր գը-
նան, սրտեղ մանգան, մինչդեռ մանգալու տեղ
չունեն. Թրանք բաւականանում են քնալ հրա-
ւերք և այնտեղ լոտօ խաղալով ժամանակ անց-
կացնել: Կուրսում երբ լինում են ընտանեկան
երեկոներ (պարահանդէսներ) շատ օրիորդներ չեն
համարձակվում գնալու այնտեղ, որովհետեւ նա-
խապաշարված ծնողները արգելում են նրանց:
Այստեղ ամօթ և նախատիք են համարում
եթէ մի ծանօթ երիտասարդ իր ծանօթ օրիորդի
նետ խօսի. իսկայն կը բամբասեն սրանց:
Այստեղի կուրսները անտեղ են, ոչ որ նրանց
վրա ուշադրութիւն դարձնող չը կայ. չը նայելով
որ ամեն տարի ընտրվում են ստաւը ինչ անի եր,
որոնք պէտք է հերթով ամեն օր վերակացու-
թիւն անեն, բայց շատ անգամ նրանք բացա-
կայում են և կուրսում յաճախ անհամաձայնու-
թիւններ և աղաղակներ են լինում, երբեմն նոյն
իսկ վերակացուի ներկայութեամբ են լինում և
այդ վերակացուները այնքան թույլ են գտնվում,

որ չեն կարողանում այդ աղմուկներն առաջն առնել, Համարձակ կարող եմ ասել, որ մեր կըլուրը կըլուր չէ, այլ տրակտոր, որտեղ պատահում են ամեն տեսակ անբաւականութիւններ: Մարդը այստեղի կըլուրում կարող է բարոյապէս փշաւալ, քան թէ զարգանալ:

Աւելորդ չենք համարում յիշել, որ անցեալ տարի ստորագրութիւն բացին և փող ժողովեցին այստեղ քաղաքային բանկ հիմնելու համար, բայց մինչև այժմ բանկի մասին ոչինչ կարգադրութիւն չէ արած: Արդեօք ինչքան որ ժողովեցին, այն փողը բաւական չէ մի բանկ հիմնելու համար, եթէ բաւական չէ, ճիշդն է հարկաւոր էլի, կամ ընդամենն որքան է ժողոված և կամ այն փողը ուժ մօտ են գտնվում, — յայտնի չէ: Տեղեկութիւն ենք խնդրում այս մասին հասարակութեանը միամտացնելու համար:

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս հասա թիֆլիս երեկի ֆրանսիացի ձեռնածու, պ. Մարիուս Կազենուվ (Marius Caseneuve): Նա յայտնի է ոչ թէ միայն ամբողջ Եւրոպայում, բայց և Ամերիկայում և երկրագնդի միւս մասերում: Ամբողջ ֆրանսիական մամուլը մեծ գովասանքով է խօսում պ. Կազենուվի ներկայացումների մասին, իսկ «Monde Illustré» պատկերազարդ շաբաթագիրը իր սեպտեմբերի 14-ի համարի մէջ տպել է մինչև անգամ պարոնի պատկերը, նրա կենսագրութեամբ: Մի ճառի մէջ, որ պ. Կազենուվ արտասանել է փարիզի Սորբոնում, նա ասել է: «Ես կախարդ չեմ, բայց մանկութիւնից փարմիկ եմ ճարպիկութեան մէջ. ես իմ կեանքին նպատակը դրել եմ երեք բանի դէմ պատերազմելու. սպիրիտիզմի, տգիտութեան և մոլեռանդութեան դէմ»: Նա միշտ իրան թշնամի է յայտնել թղթախաղի, մենամարտութեան և այլ և այլ սնոտիապաշտութիւնների: Կազենուվ տուած է իր ներկայացումները Եւրոպայի բոլոր թագաւորների առջև և ունի ստացած բազմաթիւ պատուանշաններ այլ և այլ կառավարութիւններից:

Շնորհակալութեամբ ստացանք «Անահիտ» հին գրոց, գրեց Ղ. Աղայեանց: Տպւած է թիֆլիսում Մովսէս Վարդանեանի տպարանում, ներկայ 1881 թւին: Գինը 50 կոպէկ է:

Շնորհակալութեամբ ստացանք Բոտոպ (Գօնի վրա) քաղաքում պ. Յովհ. Տէր Աբրահամեանցից հրատարակված հայոց «Որոցոց» 1882 թւի համար:

Որքան մեզ յայտնի է պ. Քիւրքեանի Անիի աւերակների գեղեցիկ ժողովածուին կարելի է գրվել թիֆլիսի Աւետարական բանկում: Այդ ստեղծագործական ժողովածուի գինը 20 րուբլ է: «Մշակի» խմբագրութիւնն էլ, իր կողմից, առաջարկում է պ. Քիւրքեանին ընդունել իր մօտ ստորագրութիւն այդ ժողովածուի վրա: Յանկարողները կարող են մեզ ուղարկել 20 րուբլ և իրանց հասցէն, որ ստանալով անմիջապէս կը հասցնենք պ. Քիւրքեանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԻՒՐԿԵԱՆ ԵՒ ՇԵՑԻ ԻՔԵՒՈՒԼԱՆ

Այս վերնագրով «Равказъ» լրագրի մէջ տպված է հետեւեալ յօդուածը:

Թիւրքաց Հայաստանի մէջ վերանորոգութիւններ մտցնելու հարցը վճռելու ժամանակ, որ այժմ հերթական է և բանակցութիւնների առարկայ է դարձել Բ. Գրան և պետութիւնների ներկայացուցիչների մէջ, երեւի ի նկատի կառնվի այժմեան անընդունալի դրութիւնը բաւական քաղաքացիութեամբ և կան քիւրդ հասարակութիւնների, որոնք ապրում են Հայաստանի և Մեսոպոտամիայի մէջ, այսպէս անուանված Քիւրդիստանում, մասամբ թիւրքիայի և մասամբ Պարսկաստանի մէջ: Այդ պատճառով ներկայումս առանձին ուշադրութեան արժանի

են տեղեկութիւններ այն նշանաւոր և երեւի քիւրդ անձնաւորութեան մասին, որ երեւի մեծ ազդեցութիւն կունենայ ասիական թիւրքիայի վիճակի վրա:

Մեր ընթերցողները ի հարկէ յիշում են այն անհանդուրժելի, որ անցեալ տարի պատճառեց քիւրդերի արշաւանքը Պարսկաստանի վրա շէյխ Իբրահիմի առաջնորդութեամբ, որ իրան քիւրդերի սրբազան առաջնորդ յայտնեց: Մի ժամանակ երկիւղ էին կրում Ատրպատականի մայրաքաղաքի վիճակի համար, բայց բաղդաւորապէս պարսիկները շուտով կարողացան հաւաքել իրանց բոլոր պատերազմական ոյժերը, ազատել Ուրմիան և յաղթել շէյխին, որ փախաւ իր երկիրը:

Դրանից յետոյ շուտով քիւրդերի առաջնորդը պէտք է ընդունէր սուլթանի հրաւերը Կ. Պօլիս գնալու համար և հերքելու պարսկական կառավարութեանց նրա վրա բարձած մեղադրանքները: Ներկայումս շէյխ Իբրահիմի սուլթանի պատուաւոր հիւր է և բնակվում է նրա համար պատրաստած տանը Բեշիկտաշի մէջ, սուլթանի բնակարանի մօտ: Առաջ նա ընդունվեցաւ գրեթէ թագաւորական պատուով, բայց յետոյ նրան մեկնեցին նրա իսկական դրութիւնը և այժմ շէյխը անհամբերութեամբ սպասում է մի դէպքի, որ ազատէր նրան պատուաւոր գերութիւնից: Իր ձանձրութիւնը փարատելու համար շէյխը ընդունում է լրագրական թղթակիցներին և ահա ինչ է գրում այդ թղթակիցներից մէկը անգլիական «Pall Mall Gazette» լրագրին:

Շէյխը մօտ 50 տարեկան տղամարդ է և նրա գծերը արդարացիում են նրա կարծիքը, թէ ինքը արաբական ազնիւ ծագումից է: Նա սպասուցանում է, թէ իր ծագումը սկսվում է մարգարէի աղջկանից և այդպիսով սբութեան կողմից երրորդ անձնաւորութիւն է բոլոր մահմեդականներին մէջ: Ինչպէս բոլոր իսկական բեդուինաւորները փաքը և չոր է, նրա ամեն բանը յիշեցնում է անապատի իսկական օրդուն, ինչպէս քնքոյշ և լաւ կազմված ձեռքերը և ոտքերը, նոյնպէս և շրջանաձէ յօնքերը, խորը նստած կրակոտ աչքերը, երկար, ուղիղ և մի փոքր ծոված քիթը և գլխի ամբողջ ձևը: Ոչ թէ ծագումը, այլ հանգամանքները նրան քիւրդերի առաջնորդ են դարձրել: Շէյխը առանձին նշանակութիւն տուեց իր ցանկութեանը, որ եւրոպական մամուլը ճշմարիտ տեղեկութիւն ունենայ նրա իսկական դրութեան մասին և նա կարծում է, թէ առանձին իրաւունք ունի անգլիացիների համակրութեան վրա, որովհետեւ նա, յարգելով Թաւրիզի անգլիական զինաւոր հիւպատոսի խնդրը, որ այն ժամանակ պատահամբ Ուրմիայի մէջ էր, յետաձգեց իր արշաւանքը Թաւրիզի վրա, իբր թէ այն պատճառով, որ ժամանակ տայ այդ քաղաքի քրիստոնեայ ազգաբնակիչները քաղաքից ապահով տեղ գնալ և այդպիսով նա զրկվեց մի միջոցից իր դրութիւնը պարսկական հողի վրա ապահովելու համար: Նրա աշխատանքները քրիստոնեաներին պաշտպանելու համար թէ իր արշաւանքի ժամանակ Պարսկաստանի վրա և թէ ուսումնական պատերազմի ժամանակ, նրա կարծիքով, պէտք է ապահովել նրան քրիստոնեայ Եւրոպայի համակրութիւնը: Նրա պատմում է, որ իր արշաւանքի պատճառը Պարսկաստանի վրա անձնական փառասիրութիւն չէր, այլ նրա միակ նպատակն էր պաշտպանել իր հայրենակիցներին պարսկական իշխանութեան ձեռն

շուրջ, որ նրանց հալածում է իրեն օտարների թէ կրօնով և թէ ծագումով: Շէյխի խօսքերը թիւրքաց կառավարութեան անկարգութիւնների մասին չափաւորվում էին թիւրքաց երկու օֆիցերների ներկայութեամբ, որոնք թափառում էին սենեակի մէջ, թէպէտ շէյխի սվիտայի մարգիւղ խորին յարգանքով ծնկաչոք նստած բաւական հեռու էին պահում այդ օֆիցերներին: Շէյխը բարեկամաբար էր խօսում հայերի մասին, բայց առանձին ուշադրութիւն դարձրեց նրանց անչափաւոր պահանջների վրա առանձին արտօնութիւններ ունենալու համար: Այստեղ շէյխի անգլիացի հիւրը համապատասխան յիշեցրեց հայերի մեղադրանքները քիւրդերի անգլութեանը և բռնութիւնների մասին: Բայց շէյխը չէր կամենում խոստովանել, որ այդպիսի վրդովեցուցիչ դէպքեր շուտ շուտ պատահելին, ինչպէս պատմում են, և գրեթէ իրաւացի պատասխանեց, որ, եթէ քիւրդերը ճշմարիտ այնքան վատ են, ինչպէս նրանց նկարագրում են, զրա համար մասամբ մեղաւոր է Եւրոպան, որ միսիօնարներ է ուղարկում և ուսումնարաններ է բացում հայերի համար, ամեն դէպքում նրանց օգտին է գործում, մինչդեռ քիւրդերը զոհ են դառնում տգիտութեան, որ ամեն տեսակ չարիքների աղբիւր է, և վատ կառավարութեան, որ նրանց հասցնում է չարագործութեան: Շէյխը անձնականապէս իր երկրի մէջ ուրախութեամբ կրնդունէր եւրոպական վարչական անձանց և ուսուցիչներին, հաւատացած լինելով, որ նրանք իրանց աշխատանքի համար նոյնքան առատ նւթ կը գտնեն քիւրդերի մօտ, որքան և հայերի մօտ: Իր նամակի վերջում անգլիացի թղթակիցը կարծիք է յայտնում, որ թէպէտ շէյխ Իբրահիմի ցանկութիւն յայտնեց ճանապարհորդել Եւրոպա և անձամբ խօսակցել եւրոպական քաղաքականութեան առաջնորդների հետ, բայց նա իսկապէս ձգտում է շուտ վերադառնալ իր հայրենիքը և եթէ նա նորից սուր մերկացնէ, այդ սուրբ ոչ թէ թէ հրանի դէմ կը լինի ուղղված, այլ մի ուրիշ մայրաքաղաքի դէմ:

Մենք մեր կողմից չը գիտենք, թէ հետեւեալ անգամ ում հետ կը պատերազմի քիւրդերի սրբազան առաջնորդը, բայց ակնհայտ է, որ հայկական հարցը կանոնաւորապէս լուծելու համար պէտք է ուշադրութիւն դարձնել այդ չափազանց հետաքրքիր, նահապետական, հովիւ, աւազակ և անհանգիստ ժողովրդի վրա, որին բոլորուվին չէ դիպել քաղաքակրթութիւնը և յիշեցնում է նահապետական ժամանակները: Մեր սեփական սահմանների մէջ ապրում են մի քանի հազար քիւրդ ընտանիքներ: Նրանց մի քանի բարի և լաւ յատկութիւնները ճանաչված են նրանցից, որոնք քիւրդերի հետ յարաբերութիւններ են ունեցել: Յիշեցնեմ օրինակի համար Երևանի նախկին գաւառապետ գեղապետ Կամսարականի յօդուածները, որի իշխանութեան տակ շատ քիւրդեր են եղել և որը նրանց մասին ոգեւորութեամբ էր խօսում: Բայց անկասկած քիւրդերը շատ վատ յատկութիւններ էլ ունեն, որոնք իրանց զրացիութիւնը մշտաբնակ բնակիչների հետ անյարմար են դարձնում: Այդ բոլոր վատ յատկութիւնների պատճառը զինաւորապէս թափառական կեանքն է, որ չէ համապատասխանում ազգաբնակչութեան ահագին մեծամասնութեան շահերին: Դրանք և մինչև անգամ այնպիսի երկիրներում, ինչպէս Պարսկաստանը և ասիական թիւրքիան, որոնք քաղաքակրթված

երկիրներ չեն կարող համարվել չեռեւապէս զինաւոր հոգսը քիւրդերի վերաբերութեամբ պէտք է այն լինի, որ նրանց համար կարելի լինի ընտելանալ մշտաբնակ կեանքի: Դրա հիմքը արդէն դրված է և այժմ փոքր-սփայի մէջ մի քանի քիւրդ ցեղեր կան, որոնք մշտաբնակ աշխատակցեալ են վարում: Քիւրդ ազգաբնակչութեան թիւը Քիւրդիստանում, թիւրքիայի և Պարսկաստանի սահմանների վրա, բաւական հաւասարութեամբ է բաժանված այդ պետութիւնների մէջ. թիւրքիայի մէջ 380,000 զանազան ցեղերի քիւրդ բնակիչներ կան, Պարսկաստանում 300,000:

Հետեւեալ անգամ մենք կը խօսենք հայկական խնդրի ամենանշանաւոր բաժնի մասին, այսինքն հայերի անմիջական շահերի մասին, որոնք հին ժամանակներից փոքր-սփայի ահագին տարածութեան վրա խաղաղ և մշտաբնակ ազգաբնակչութիւն են կազմում և այժմ ամենայն իրաւամբ ամենայնուպի տարր են կազմում եւրոպական քաղաքակրթութեան իսկական տարածողներ լինելու համար: Փոքր-սփայի միւս ժողովուրդների մէջ, Հասկանայի է, որ եթէ քիւրդերի շահերը անուշադիր չը պէտք է թողնել, ուրեմն խաղաղ քրիստոնեայ ազգաբնակչութեան շահերը պէտք է աւելի էլ գնահատել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 28 սեպտեմբերի

Յուսով եմ որ դժուար կարելի է տարակուսիլ թէ յարուցանելով տնտեսական խնդիրը Կ. Պօլիս լրագրիչների մէջ այն բուռը կերպով ինչպէս այդ արեց ձեր աշխատակիցը, կը նշանակէր օրաշուջ իմանալ և աչքի առաջ ունենալ մի մեծ ընկ, որին պիտի ենթարկվէր նախաձեռնութիւն ստեղծող ոչ միայն հասարակային պատիւը և վարկը, այլ ևս նորա բոլոր անձնական արժանապատուութիւնը և ինքնասիրութիւնը: Այդ, ճշմարիտ է, որ ես ունէի բարոյական նեցուկ և պատուաւոր «Մշակը», բայց դա հերքել չէր, լինելով այնչափ հեռու, որ հազիւ թէ մի յօդուած այստեղից իր գնալու զաւու համար քսան օրից ոչ պակաս ժամանակ կը պահանջէ: Դրա կողմից էլ, որչափ էլ «Մշակը» ազդեցիկ և ուժով լինէր, դարձեալ նա այն նշանակութիւնը չէր կարող ունենալ այստեղի հասարակութեան համար, ինչ որ և է մէկը այստեղ հրատարակողները: Այս այսպէս լինելով, սակայն մի դադանի բնազդում և խղճի պահանջ անդադար դրում էր ինձ թեքելու յետ ծաղի և գրականական կուռ մղվել ամբողջ Կ. Պօլիս ինտելլիգենցիայի դէմ կամ նորա սխալմունքները իրան հակադրելու և պարտաւորութիւնը հոյց տալու համար Հայաստանի ժողովրդի բարեկեցութեան վերաբերմամբ, կամ թէ ինքս յաղթվիլ ու համոզվիլ թէ իմ սկսած պրօպագանդան շանդապատակ է, «վաղահաս է», «երեւակալական է», «անիրագործելի է» և այլն: Կուռ դեռ սկզբում, երբ ամեն կողմից բարեկամներ և հակառակորդներ դեռ չը գիտէին թէ այս պրօպագանդան «Մշակի» փայտալած և սիրած առարկաներից միւն է, յանկարծ երեացին «Մշակի» հինգ առաջնորդող յօդուածները, որոնցով պարզ լ պարզոյ հոյց տուաւ Գրիգոր Արծրունին Կ. Պօլիս ազգայիններին թէ իր աշխատակցի պահանջանքները օգից վերցրած և ինքնաշար բաներ չեն, այլ նոյնպէս իրան «Մշակի» խմբագրի խորը համոզմունքը և դաւանանքը: Երբեք այդ յօդուածները քիչ քան չը տեսնան մի կողմից ձեր աշխատակցին նոր ոյժ և կորով տալու համար, միւս կողմից էլ հակառակորդների ինքնապատահութիւնը և ֆանֆարօնութիւնը կոտորելու:

Բայց դժբաղդարար հարցը սոցա համար չը կարողայցաւ դարձեալ պարզվել և որոշվել, վասնորոյ հարկաւոր եղաւ սկսել նոր շարք ուժգին հարուածների «Մանգուլ» միջոցով, որի համարձակ քննադատական ուղղութիւնը և կերպը արդէն ձեռք յայտնի է: Այդ օրից ընդդիմաբան բանակի կենտրոնաւայրը դառաւ «Մասիս», որի մէջ սկսեցին երեւալ յօդուածներ էրդուամից